



ՖԻՆԱՆՍՆԵՐ

Հոդվածի հղումը. Ասատրյան Կ. (2023), Հարկային քաղաքականության հիմնախնդիրները լեռնահանքային արդյունաբերության կայուն զարգացման համատեքստում, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 1(1), էջ 7-20, DOI: 10.52174/29538114_2023.1-7


Ներկայացվել է խմբագրություն՝ 23.06.2023 թ.

Ուղարկվել է գրախոսության՝ 26.06.2023 թ.

Երաշխավորվել է հրատարակման՝ 18.07.2023 թ.

ԿԱՐԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի
տնտեսագիտության ամբիոնի
գործարարության կառավարման մագիստրոս

 <https://orcid.org/0009-0003-8379-2591>

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լեռնահանքային արդյունաբերությունն առանձնանում է կիրառվող հարկային քաղաքականությամբ: Ոլորտի հարկատեսակների շրջանակը բավական լայն է և ավանդական հարկերից բացի ընդգրկում է նաև բնօգտագործման վճարներ, ոռոյալթի, բնապահպանական հարկեր: Պեղծության նկատմամբ հարկային պարտավորությունների կատարմամբ լեռնահանքային արդյունաբերության ոլորտն ակնկալում է հարկերի արդարացի վերաբաշխում: Ուսումնասիրությունները ցույց են փայլիս, որ ՀՀ-ում կիրառվող հարկաբյուջեի քաղաքականությունը բնավ չի նպաստում լեռնահանքային կազմակերպությունների կայուն զարգացմանը. վերջիններիս սպասելիքները պետական ֆինանսական աջակցության առումով շատ ավելին են, քան իրականում է: Հարկատու կազմակերպությունները նպատակ ունեն պետական ֆինանսական աջակցությամբ լուծելու նոր տեխնոլոգիաների ներդրման, ժամանակակից մեթոդներով թափոնների կառավարման խնդիրները, քանի որ դրանց իրականացումը ծախսատար է և արտաքին ֆինանսական օժանդակության կարիք ունի: Մյուս կողմից՝ հարկերի

արդյունավետ վերաբաշխման կարիք ունեն նաև հանքարդյունաբերական կազմակերպությունների շուրջ ձևավորված համայնքները, քանի որ դրանք վնասակար ազդեցությունը առաջին հերթին հենց իրենք են զգում: Ուստի, լեռնահանքային արդյունաբերությունում հարկային քաղաքականություն մշակելիս անհրաժեշտություն է առաջանում լուծելու ոչ միայն հարկերի հավաքագրման, այլև հարկերի արդարացի վերաբաշխման խնդիրները:

Հոդվածում մեկնաբանվում են լեռնահանքային արդյունաբերության ոլորտում կիրառվող հարկաբյուջեի քաղաքականության բարելավման հիմնախնդիրները, որոնց լուծումները կհանգեցնեն ոլորտի կայուն զարգացման: Մասնավորապես՝ առաջարկվում է հանքարդյունաբերության արտաքին և ներքին շահառուների միջև ձևավորել տեղեկարկական հեղադարձ կապի մեխանիզմ, որը հնարավորություն կընձեռնի գնահատելու ոլորտի շահառուների նպատակադրումների իրականացման աստիճանը վարվող հարկաբյուջեի քաղաքականության և կազմակերպությունների կայուն զարգացման փոխառնչության համարեքստում:

Հիմնաբառեր. *հանքարդյունաբերություն, հարկային քաղաքականություն, հարկային բեռ, հարկերի հավաքագրում, հարկերի վերաբաշխում*

JEL: H21, H30

DOI: 10.52174/29538114_2023.1-7

Ներածություն: Հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատումը տնտեսագետների ուշադրության կենտրոնում հայտնվեց 19-րդ դարի 30-ական թվականներին, երբ ԱՄՆ-ում Մեծ ճգնաժամի ընթացքում պարզ դարձավ, որ պետությունը հարկազանձման և բյուջետային ծախսերի ուղղությունների ճկուն դրսևորումների արդյունքում կարող է մակրոտնտեսական լուրջ կարգավորումներ իրականացնել՝ մեղմելով գործազրկությունը, ակտիվացնելով տնտեսությունը արդյունաբերական պետական պատվերների, հանրային ծախսերով ծառայությունների գնումների, հարկային տարբերակված դրույքաչափերի շնորհիվ¹: Հետագայում զարգացավ քեյնսյան տեսությունը, որը մեկ անգամ ևս ընդգծեց պետության կարգավորիչ դերը մակրոտնտեսական միջավայրում²:

Քեյնսյան տեսությանը հաջորդեց և մինչ օրս տեսաբանների կողմից իր զարգացումն է ստանում դիսկրեցիոն ֆիսկալ քաղաքականության մեկնաբանությունը, երբ տարբեր գնահատականներ են տրվում պետության կողմից հարկազանձման նպատակադրումներին՝ ուղղված ոչ միայն հանրային ծախսերի ֆինանսավորման պաշարների ձևավորմանը, այլև հենց պետության կողմից արտադրության ակտիվացմանը և տնտեսական աճի կարգավորմանը³:

Հարկաբյուջետային քաղաքականության նման մոտեցումները զգալի արդյունք են ապահովում մակրոտնտեսական հարթությունում, երբ հարկազանձման միտումները փոխկապակցվում են ՀՆԱ աճի, գործազրկության,

¹ Տե՛ս **Арутюнян Т.**, Направление налоговых реформ и проблемы оценки налоговой нагрузки в РА, «Известия аграрной науки», том 11, №3, 2013, էջ 93-98:

² Տե՛ս **Кейнс Дж.**, Общая теория занятости, процента и денег. «Мир», 1936, էջ 104:

³ Տե՛ս **Игошина Л.Л.**, Конкурентоспособность национальной экономики: инновационные императивы и финансовые регуляторы, «Экономический анализ: теория и практика», № 7, 2014, էջ 12–20:

ինչպես նաև պետական պարտքի կարգավորման գործառույթների հետ⁴: Սակայն նույնը չի կարելի ասել ճյուղային ոլորտի մասին, որտեղ նույն խորությամբ չեն դիտարկվում խնդիրները: Փոխարենը՝ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության գնահատումները ավելի շատ մեկնաբանություններ են ձևավորում ոչ թե «վերևից» (պետության կողմից), այլ «ներքևից», այսինքն՝ ճյուղի գործունեությանն առնչվող շահառուների կողմից⁵:

Գրականության ակնարկ: Հարկային քաղաքականության ձևավորումը լեռնահանքային արդյունաբերությունում առանձնահատկություններ ունի ոչ միայն հարկատեսակների առավել լայն շրջանակի, այլև հարկազանձման արդարության և նպատակայնության տեսանկյունից: Այսօր արդեն փոքր տարածք ունեցող երկրներն աստիճանաբար հրաժարվում են մետաղական հանքաքարի հանույթից և մշակումից՝ երկրի ներսում ծավալվող լեռնահանքային արդյունաբերությունը սոցիալ-տնտեսական առումով համարելով ոչ նպատակահարմար: Ընդ որում, ոլորտի զարգացման նպատակահարմարությունն ունի ոչ միայն բնապահպանական, այլև հանրային շահեր: Երկրի ընդերքի շահագործումը որոշ առումներով հակասում է ազգային շահերին, քանի որ հանքաքարի մշակումից սոցիալ-տնտեսական բացասական հետևանքները հաճախ գերազանցում են լեռնահանքային արդյունաբերության արդյունքում դրական սպասումներին:

Այսպես՝ լեռնահանքային արդյունաբերությունը հսկայական վնասներ է հասցնում գյուղատնտեսությանը, պոչամբարները պատճառ են դառնում գետերի ու ստորջրյա հոսանքների թունավորման, ոչնչացնում են անտառն ու ավաիական մարգագետինը, աղտոտում մթնոլորտը, թափոնալցոններով զբաղեցնում են լանդշաֆտի էական տարածքներ: Արդյունաբերության այս ոլորտը խիստ վնասաբեր է նաև մարդու առողջության համար. հանքերին և պոչամբարներին կից բնակավայրերի բնակչությունը զգում է թունավոր նյութերի առկայությունը և տառապում դրանցից բխող զանազան հիվանդություններով:

Նշված ոլորտի զարգացումը հակասում է ազգային շահերին հատկապես այն դեպքում, երբ երկիրն ընդամենը որպես հումքային կցորդ է հանդես գալիս և մետաղական հանքաքարի մշակումը չի իրականացնում ավարտական փուլով՝ թողարկելով մետաղական վերջնական արտադրանք: Փաստորեն, վերամշակող զարգացած երկրներին որպես հումքահանքային կցորդ ծառայող զարգացող երկիրն օգտագործում է իր ազգային հարստությունը՝ ընդերքը, վնասում է էկոլոգիան, կիրառում հանքաքարի հարստացման թունավոր տեխնոլոգիաներ, լանդշաֆտը փչացնում թափոնակուտակումներով, որից խուսափում են հարստացված հանքաքարը օգտագործող և մետաղի արտադրության պարբերաշրջանը եզրափակող զարգացած երկրները⁶: Նման իրավիճակ է ներկայումս ձևավորվել Հայաստանի Հանրապետությունում, երբ երկիրը պղնձի, մոլիբդենի և ոսկու հանքաքարի խտանյութեր է արտադրում, որոնք

⁴ Տե՛ս **Игоина Л.Л.**, Воздействие фискальной и монетарной политики на развитие экономики и социальной сферы, «Финансы и кредит», № 15, 2014, էջ 37-45:

⁵ Տե՛ս **Хеллер П.**, Фискальное пространство – что это такое и как его получить?, «Финансы и развитие», июнь, 2009, էջ 32-33:

⁶ Տե՛ս **Кальнер В.Д.**, Экологический конфликт в обществе. «ЭКИП: Экология и промышленность России», № 6, 2012, էջ 5:

արտահանվում են՝ չավարտելով գունավոր մետաղների արտադրության պարբերաշրջանը, այդ թանկարժեք արտադրատեսակների թողարկման հնարավորությունները փաստացի փոխանցելով օտարերկրյա գործընկերներին:

Մյուս կողմից՝ հարստացված հանքաքարի արտադրական ոլորտը գերշահույթ է ապահովում, վճարում է ոչ միայն գործարարության ավանդական հարկերը (շահութահարկ, ԱԱՀ), այլև լրացուցիչ հարկային պարտավորություններ է ստանձնում պետության հանդեպ, ինչպիսիք են ռոյալթին, բնօգտագործման և բնապահպանական հարկերը: Հետևապես՝ այս ոլորտին հատուկ է նաև հարկերի ֆիսկալ գործառույթի ակտիվությունը, և դա որոշակիորեն շահադրդիչ գործոն է դառնում հանքարդյունաբերության ընդլայնման համար: Այսպես՝ գունավոր մետաղների հարստացված հանքաքար արդյունահանող կազմակերպությունները մշտապես հայտնվում են խոշոր հարկատուների առաջին հարյուրյակում⁷, իսկ հարկային տարեկան մուտքերում գունավոր մետաղների հանքագործության ոլորտից հարկազանձումները կազմում են շուրջ 5%⁸:

Սակայն հարկերի բնութագրիչները (օրինական բնույթը, պարտադիր և նպատակային լինելը), որոնցով դրանք տարբերվում են վճարային մյուս պարտավորություններից, որոշակիորեն կոնֆլիկտային եզրույթներ են ձևավորում հարկային քաղաքականության վարման գործընթացում, որոնք հատկապես ընդգծվում են լեռնահանքային արդյունաբերությունում⁹: Եթե պետությունը հարկազանձման միջոցով փորձում է զսպել անարդյունավետ բնօգտագործումը, կանխարգելել բնապահպանական վնասները և, ի վերջո, հարկել ոլորտում ձևավորվող գերշահույթն ու լուծել ֆիսկալ նպատակադրումները, ապա հարկազանձման սպասումները ազգաբնակչության շրջանում նույնը չեն և այլ բնույթ ունեն. միտված են սոցիալական խնդիրների լուծմանը¹⁰:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել հանքարդյունաբերությունում վարվող հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրապարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները: Օգտագործվել են հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը վերաբերող հաշվետվական տվյալներ, ՀՀ վիճակագրական և հետազոտական բնագավառին առնչվող նյութեր: Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական վերացարկման, ֆինանսատնտեսական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև հարկային հավաքագրումների և դրանց վերաբաշխումների փորձագիտական հետազոտության եղանակներ: Փորձագիտական վերլուծությունների հիման վրա կատարվել են մեկնաբանություններ հարկազանձման քաղաքականության և կայուն

⁷ Տե՛ս ՀՀ ՊԵԿ-ի պաշտոնական կայք. www.taxservice.am

⁸ Տե՛ս ՀՀ պետական բյուջեի կատարողականի հաշվետվության ամփոփ նկարագիրը 2022 թ.:

⁹ Տե՛ս **Грызлова Е.В.**, Налог на добычу полезных ископаемых. «Налоговый вестник», №3, 2007, էջ 28:

¹⁰ Տե՛ս **Балакина А.П.**, Частные и публичные интересы в налоговом праве: вопросы взаимодействия. «Налоги и налогообложение», 2005, №2, էջ 26:

զարգացման փոխառնչությունների շրջանակում, որի արդյունքում ձևավորվել են որակական եզրահանգումներ և ներկայացվել առաջարկություններ:

Հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել են վերլուծական և համադրական մոտեցումներ. մասնագիտական գրականությունում առկա հեղինակային տարբեր մեկնաբանություններ քննության են ենթարկվել, համադրվել՝ հանգելով որակական եզրահանգումների: Կատարվել է նաև վարկածների վերլուծություն՝ ներկայացնելով դրանց հիմնավորման ուղղությունները: Հետազոտությունում իրականացվել են նաև համեմատական գնահատումներ՝ նպատակ ունենալով որակապես բնութագրելու հարկաբյուջետային համակարգի գործունեության ոլորտը: Ներկայացված հետազոտական առաջարկություններն արտահայտվել են գրաֆիկական մեկնաբանություններով:

Հետազոտության համար որպես տեսական հիմք են ծառայել դասական և ժամանակակից տնտեսագետների՝ հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տեսակետները և եկամուտների անհավասարության հաղթահարման ուղղությամբ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատող հետազոտությունները: Հետազոտության վերջնարդյունքները ձևավորվել են հանքարդյունաբերության ոլորտի հարկատու կազմակերպություններում կատարված հարցումների հիման վրա՝ հաշվի առնելով ոչ միայն ֆիսկալ քաղաքականության շահերը, այլև հարկերի արդարացի բաշխման սկզբունքները: Առաջարկվել են հարկազանձման շահառուների հետադարձ կապի տեղեկատվական համակարգի կառուցման հայեցակարգային դրույթներ՝ գծապատկերային ձևակերպումներով:

Վերլուծություն: Հանքարդյունաբերական գործունեությունը պետական բյուջեի հարկային մուտքերի ապահովման առումով առանցքային դերակատարում ունի ՀՀ-ում: Դա հատկապես դրսևորվում է գունավոր մետաղների հանքաքարի արդյունահանման ոլորտում, երբ արտադրվում է պղնձի, մոլիբդենի և ոսկու հարստացված խտանյութ: Սակայն եթե հանքարդյունաբերությանը չի ցուցաբերվում կայուն զարգացման մոտեցում, ապա դա բնապահպանական աղետալի հետևանքներ է առաջացնում: Մասնավորապես՝ ընդերքի անխնա շահագործումը, արդյունաբերական վտանգավոր թափոնների կուտակումները, օդային ավազանի աղտոտումները հանգեցնում են հանքարդյունաբերական կազմակերպությունների կողմից կատարվող հարկային և բնապահպանական վճարների՝ շրջակա միջավայրի վնասման փոխհատուցման անարդյունավետությանը:

ՀՀ պետական բյուջեի հարկային մուտքերի կազմում էական տեսակարար կշիռ ունեն բնապահպանական և բնօգտագործման հարկերը (աղյուսակ 1), և, վիճակագրական դիտարկումներով, այդ միտումը աճ է արձանագրում: Սակայն, դրան զուգահեռ, դեռևս չկա վիճակագրություն, թե որքանով են այդ հարկերը վերաուղղվում շրջակա միջավայրի պաշտպանությանը: Թերևս, պետության կողմից իրենց կարգավորումներն են ստանում ՀՀ պետական բյուջեից կատարվող փոխհատուցման ուղղությունները, սակայն այստեղ դեռևս ներառված չէ հանքարդյունաբերության գործունեության շրջանակը (աղյուսակ 2):

Աղյուսակ 1

«Հ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվող եկամուտներ (մլն դրամ)»¹¹

Ցուցանիշ	2022 թ. հունվար-դեկտեմբեր	2023 թ. հունվար-մարտ
ԱԱՀ	679,555.6	165,599.4
Մաքսային մարմինների կողմից հավաքագրված	282,909.9	84,337.8
Շահութահարկ	222,805.5	39,015.2
Եկամտային հարկ	475,038.3	132,936.0
Ակցիզային հարկ	127,499.3	32,517.9
Շրջանառության հարկ	40,730.0	12,972.2
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար, այդ թվում՝	95,932.1	10,600.7
ԵԱՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար	2,151.1	508.4
Մաքսային մարմինների կողմից հավաքագրված	5,014.7	1,557.7
Մաքսատուրք, այդ թվում՝	56,685.8	16,273.9
Սոցիալական վճար	64,457.3	21,390.5
Այլ հարկային եկամուտներ ³	56,488.1	17,475.1
Պետական տուրք	106,821.0	12,572.1

Աղյուսակ 2

2023 թ. 1-ին եռամսյակի և նախորդ տարվա նույն եռամսյակի ընթացքում ՀՀ բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների կառուցվածքն ըստ կշիռների¹²

1	Ցուցանիշներ	2023 II եռամսյակ	2022 I եռամսյակ
	ԱԱՀ-ի վերադարձի (Tax free) հաշիվներով ՀՀ տարածքում վճարված ԱԱՀ-ի վերադարձված գումար	0.3%	0.2%
2	Միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների մասով միասնական հաշվին մուտքագրված գումար	84.0%	82.4%
3	Ակցիզային հարկի փոխհատուցվող գումարի մասով (ուսումնասիրության արդյունքներով) միասնական հաշվին մուտքագրված գումար ²	1.1%	0.0%
4	Ակցիզային հարկի փոխհատուցվող գումար՝ համաձայն ՀՀ Կառավարության 24.08.2017 թ. թիվ 1048-Ն որոշման	0.1%	0.2%
5	Ակցիզային հարկի փոխհատուցվող գումար՝ համաձայն ՀՀ Կառավարության 28.09.2017 թ. թիվ 1208-Ն որոշման	0.1%	0.0%
6	Վարկառուներին հիպոթեկային վարկի սպասարկման տոկոսների մասով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված վճարման հանձնարարականների հանրագումար	12.7%	14.8%

Այսօր արդիական այն հարցադրումը, թե հարկային մուծումների արդյունքում պետության կողմից որքան օժանդակություն են ստանում հանքարդյունաբերական կազմակերպությունները: Պետական օժանդակությունը պետք է

¹¹ Աղբյուրը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայք, www.petekamner.am, հարկային վիճակագրություն:

¹² Նույն աղբյուրը:

դրսևորվի նորագույն թանկարժեք տեխնոլոգիաների ներդրմամբ, որի շնորհիվ կկրճատվեն վտանգավոր արտանետումները, կկատարվի հանքերի փակ շահագործում, պոչամբարներում կուտակված թափոնների երկրորդային վերամշակման հնարավորություն կստեղծվի:

Հանքարդյունաբերության գործունեության արդյունքում ձևավորված պոչամբարները հավասարապես չեն բաշխված ՀՀ տարածքում, իսկ դրանց մի մասն էլ արդեն չի գործում (աղյուսակ 3): Ուստի, հանքարդյունաբերության ոլորտում հավաքագրված հարկերի հետագա վերաբաշխումը չպետք է իրականացվի համահարթեցված սկզբունքով, ինչպես տնտեսավարման մյուս ճյուղերում է, այլ պետք է որոշակիորեն նպատակաուղղվի հանքարդյունաբերության սոցիալ-տնտեսական վնասների փոխհատուցմանը: Դրանով իսկ լեռնահանքային արդյունաբերության բնագավառում արդիական է համարվում հարկային համակարգում ընդգրկված բոլոր սուբյեկտների շահերի ներդաշնակեցումը: Մասնավորապես, ներկայումս հարկ է միջոցներ ձեռնարկել՝ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում ֆինանսական գործիքներով սահմանելու հակակշիռներ հարկերի ֆիսկալ և սոցիալական գործառույթների միջև:

Աղյուսակ 3

ՀՀ մեքաղական օգրակար հանածոների հանքավայրերի հարստացուցիչ ֆաբրիկաների պոչամբարները

№	Պոչամբարի անվանումը	Տեղագրման վայրը	Հանքավայրը	Կարգավիճակը	Ծավալը (մլն խ.մ ³)
1	Արծվանիկ	Արծվանիկ գետի վրա	Քաջարան (Cu, Mo)	գործող	310.0
2	Ողջի	Ողջի գետի վրա	Քաջարան (Cu, Mo)	կասեցվել է 1977 թ.	30,0
3	Փխրուտ	Ողջի գետի աջափնյա վտակի վրա	Քաջարան (Cu, Mo)	կասեցվել է 1969 թ.	6.0
4	Գեղանուշ	Գեղանուշ գետի վրա	Կապան (Cu, Pb, Zn, Au)	գործող	11.3
5	Ագարակ-1	Ագարակի I ձորակում	Ագարակ (Cu, Mo)	գործող	9.1
6	Ագարակ-2	Ագարակի II ձորակում	Ագարակ (Cu, Mo)	գործող	17.9
7	Ագարակ-3	Ագարակի III ձորակում	Ագարակ (Cu, Mo)	գործող	40,9
8	Թեղուտ	Գյուղ Թեղուտ	Թեղուտ (Cu, Mo)	գործող	180
9	Արարատ	Արագածի գյուղ	Սոթք (Au)	գործող	20
10	Ախթալա	Նահատակ գետի վրա	Շամբուլ (Cu, Pb, Zn)	գործող	3.2
11	Հանքասար	Գեղի գետի վրա	Հանքասար (Cu, Mo)	գործող	2,8

Այդ առումով, նպատակային ենք համարում հանրային ծախսերի ու գործարարության տեսանկյունից վերլուծելու հանքարդյունաբերության գործունեությանն առնչվող ֆիսկալ հավաքագրումների և ազգաբնակչության սոցիալական բավարարվածության փոխառնչությունը: Հարկերի հավաքագրումը

որոշակի լարվածություն է ձևավորում հարկատուների շրջանում, երբ մեծանում է նրանց հարկային բեռը:

Որպես կանոն, մասնագիտական գրականության մեջ հարկազանձման լարվածությունը դեռևս հիմնականում չափվում և գնահատվում է հարկային բեռի տեսանկյունից: Սակայն, մեր կարծիքով, հարկազանձման գործընթացի լարվածության աստիճանն առաջին հերթին պետք է բնորոշվի հարկատուների՝ օրենքով սահմանված կարգով ֆիսկալ պարտականությունների կատարմամբ:


Գործարարության ոլորտը, հարկեր վճարելով, սպասումներ ունի պետությունից հարկերի նպատակային և արդարացի վերաբաշխման առումով¹³, և եթե այդ սպասումները չեն արդարանում, ապա լարվածություն է առաջանում հարկազանձման գործընթացում. հարկատուները դժկամությամբ են կատարում իրենց հարկային պարտավորությունները: Հակառակ պարագայում, երբ գործում է հարկազանձման բումերանգի էֆեկտը, հարկատուները գիտակցաբար և ըմբռնումով են մոտենում իրենց հարկային պարտավորությունների կատարմանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդերքօգտագործող կազմակերպությունները, որոնք ՀՀ-ում գերշահույթ են ստանում, դրա դիմաց համապատասխան հանրային փոխհատուցում չեն իրականացնում և ոչ էական սոցիալական պարտավորություններ են ստանձնում¹⁴:

Նման իրավիճակը հատկապես ակնառու է դրսևորվում լեռնահանքային արդյունաբերության ոլորտում, որտեղ կազմակերպությունները, գործարարության ուղղակի և անուղղակի հարկերին զուգահեռ, լրացուցիչ բնապահպանական ու բնօգտագործման հարկեր են վճարում, իսկ հանքավայրերին կից բնակավայրերի բնակչության շրջանում պետությունից սոցիալ-տնտեսական լրացուցիչ արդյունքային սպասումներ են ձևավորվում: Ուստի, հենց այս առումով, ոլորտում վարվող հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետությունը գնահատելիս կարևորվում են հարկատու լեռնահանքային կազմակերպությունների և համայնքային ազգաբնակչության սպասումները պետության հարկազանձումներից:

Մասնագիտական գրականությունում լեռնահանքային արդյունաբերության ոլորտում վարվող արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության հայեցակարգը առաջարկվում է դիտարկել հարկազանձման արդյունավետության և հարկատուների ու ազգաբնակչության սոցիալ-տնտեսական սպասումների տեղեկատվական հետադարձ կապի ապահովվածության տեսանկյունից (գծապատկեր 1): Ընդ որում, առաջարկվող հայեցակարգում առանցքային են համարվում ինչպես լեռնահանքային կազմակերպությունների հարկային իրատեսական բեռի սահմանումները, այնպես էլ վճարային հատույցի գնահատումները:

¹³ Տե՛ս **Խաչատրյան Ա.**, Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», 11-12 (195-196), 2016, էջ 85-87:

¹⁴ Տե՛ս **Кучеров И.И.**, Новый концептуальный подход к определению налога. «Финансовое право», №1, 2008, էջ 32-35:



Գծապատկեր 1. Հարկաբյուջեային քաղաքականության հայեցակարգի ձևավորման ուղիները լեռնահանքային արդյունաբերությունում¹⁵

Այս դեպքում խնդիր է առաջանում սահմանելու լեռնահանքային կազմակերպությունների հարկային բեռի համընդհանուր ցուցանիշ, որով հնարավորություն կստեղծվի գնահատելու նաև հարկազանձման արդյունավետությունը: Որպես կանոն, մակրոտնտեսական մակարդակում հարկային բեռի առավել գործաձական ցուցանիշ է համարվում հավաքագրված հարկեր/ՀՆԱ հարաբերությունը¹⁶: Ելնելով այս մոտեցումից՝ առաջարկվում է հարկատու լեռնահանքային կազմակերպությունների համար որպես հարկային բեռի համընդհանուր ցուցանիշ սահմանել պետբյուջե վճարների ընդհանուր գումար/իրացումից եկամուտ հարաբերակցությունը:

Հարկաբյուջետային արդյունավետ քաղաքականության հայեցակարգում միայն հարկային բեռի հաշվարկային արդյունքների մեկնաբանումները դեռևս բավարար չեն: Այստեղ կարևորվում է նաև այն հանգամանքը, թե ինչպես է գնահատվում հարկազանձման արդյունավետությունը: Հարկատու կազմակերպությունները շահադրդված են պարզելու, թե որքանով է պետությունն աջակցում իրենց կայուն գործունեությանն ու զարգացմանը:

Վճարելով հարկեր, կատարելով բնօգտագործման և բնապահպանական մուծումներ, հանքարդյունաբերության կազմակերպությունները, իրենց հերթին, սպասելիքներ ունեն պետությունից: Ընդ որում, այդ սպասելիքները կարելի է մեկնաբանել գործարարության և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը պետության աջակցման ծրագրերի տեսանկյունից: Պետությունը, վստահաբար, պետք է շահագրգիռ լինի և հաճախ նաև համաֆինանսավորողի դերում հանդես գա հանքարդյունաբերության ոչ վնասակար և արդիական տեխնոլոգիաների ներդրման գործում, աջակցի կազմակերպություններին մետաղի խտանյութի իրացման գծով միջազգային մարքեթինգի իրականացմանը, կատարի էկոլոգիական վնասների կանխարգելման լայնածավալ աշխատանքներ, որոնք ի զորու չեն իրականացնելու հարկատուները:


¹⁵ Տե՛ս **Muradyan S., Znotina D.**, Theoretical aspects of fiscal policy in the mining sector, journal of social sciences Latgale National Economy Research, No 1(11), november, 2019, էջ 120:

¹⁶ Տե՛ս **Հարությունյան Ս.**, Բիզնես միջավայրն ու հարկերի վճարման համեմատական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», 11-12 (161-162), 2013, էջ 44-46:

Մյուս կողմից՝ հանքարդյունաբերական կազմակերպություններին տա-
րածքային առումով հարող համայնքային ազգաբնակչությունը նույնպես
սոցիալ-տնտեսական գործողություններ ենթադրող սպասելիքներ ունի պե-
տությունից, որոնք վերաբերում են համայնքային ենթակառուցվածքների բա-
րելավմանը, առողջապահական միջոցառումների իրականացմանը, արտա-
դրական թափոնակույտերի վնասագերծմանը և այլն:

Անհրաժեշտություն է առաջանում գնահատելու նաև հարկաբյուջետային
քաղաքականության արդյունավետության աստիճանը, քանի որ դա մի կող-
մից՝ ամփոփում է պետության ֆիսկալ գործունեության արդյունքները, մյուս
կողմից՝ ցույց է տալիս հավաքագրված հարկերի վերաբաշխման ոլորտներն
ու թիրախային ուղղություններով օգտագործման փաստացի հատույցը:

Ընդ որում, վերոնշյալ տեղեկատվության պահանջատեր են առաջին հեր-
թին հանքարդյունաբերության ոլորտի շահառուները (ներդրողները, կազմա-
կերպության կառավարիչները, համայնքի կառավարման մարմինները, ազ-
գաբնակչությունը), որոնց համար արդյունավետ հարկաբյուջետային քաղա-
քականությունը պետք է ապահովվի հաշվետվողականությամբ և հետադարձ
կապով (գծապատկեր 2): Դրանով իսկ, ոլորտում վարվող հարկային քաղա-
քականության արդյունավետության տեղեկատվական ապահովվածության
պահանջը կձևավորվի «ներքևից», որով և հանքարդյունաբերության ոլորտի
շահառուները պարբերաբար պետությանը կներկայացնեն հարկաբյուջետա-
յին քաղաքականության բարելավման առաջարկներ:



Գծապատկեր 2. Տեղեկատվական հետադարձ կապի դերը հարկաբյուջետային քաղաքականության բարեփոխումների համապեքսպում¹⁷

Այս առումով կարևորվում է լեռնահանքային կազմակերպություններում տեղեկատվական համակարգի բարելավումն այնպես, որ ոլորտի շահառու-

¹⁷ Տե՛ս **Մուրադյան Ա.**, Հարկային արդյունավետ քաղաքականության տեսամեթոդաբանական մոտեցումները, «Այլընտրանք» գիտական հանդես, №2, ապրիլ-հունիս, 2018, էջ 382-388:

ները պարբերաբար տեղեկատվություն ստանան ոչ միայն հարկային պարտավորությունների առաջացման, այլև հարկազանձումից ձևավորված ֆինանսական ռեսուրսների վերաբաշխման ուղղությունների, չափերի և ստացվող փաստացի հատույցների մասին:

Եզրակացություններ: Հարկային քաղաքականության ձևավորումը լեռնահանքային արդյունաբերությունում առանձնահատկություններ ունի ոչ միայն հարկատեսակների առավել լայն շրջանակի, այլև հարկազանձման արդարության և նպատակայնության տեսանկյունից: Տվյալ ոլորտի զարգացումը հակազդում է ազգային շահերին այն դեպքում, երբ երկիրն ընդամենը որպես հումքային կցորդ է հանդես գալիս և մետաղական հանքաքարի մշակումը չի իրականացնում ավարտական փուլով՝ թողարկելով մետաղական վերջնական արտադրանք: Մյուս կողմից՝ հարստացված հանքաքարի արտադրական ոլորտը գերշահույթ է ապահովում, ձևավորում է ոչ միայն գործարարությանը բնորոշ ավանդական հարկեր (շահութահարկ, ԱԱՀ), այլև լրացուցիչ հարկային պարտավորություններ է ստանձնում պետության հանդեպ, ինչպիսիք են ռոյալթին, բնօգտագործման և բնապահպանական հարկերը: Ուստի, այս ոլորտին հատուկ է նաև հարկերի ֆիսկալ գործառույթի ակտիվությունը, և դա որոշակի շարժառիթ է ձևավորում հանքարդյունաբերության ընդլայնման համար:

Հետևաբար՝ լեռնահանքային արդյունաբերության ոլորտում պետությունը պետք ձգտի հնարավորինս հավասարակշռված ֆիսկալ քաղաքականություն վարել, որպեսզի անհիմն չհակադրվի գործարարության շահերին և ավելորդ լարվածություն չառաջացնի հարկազանձման բնագավառում:

Լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկաբյուջետային քաղաքականության հայեցակարգային մոտեցումներով պետք է հնարավորություն ստեղծվի ֆիսկալ գործառույթների բարելավման առաջարկները նախաձեռնելու «ներքևից», այսինքն՝ հարկազանձման ոլորտում ընդգրկված շահառուների կողմից: Այս դեպքում գործարար ոլորտի, ինչպես նաև համայնքային ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, տիրապետելով հարկերի հավաքագրման և վերաբաշխման հաշվետվողականությանը, կարող են ընդհանրական գնահատականներ տալ ֆիսկալ գործառույթների ոլորտային արդյունավետության վերաբերյալ: Բացի այդ, կարևոր է ապահովել տեղեկատվական հետադարձ կապ լեռնահանքային արդյունաբերության զարգացմանն առնչվող բոլոր շահառուների միջև՝ դրանով իսկ հարկազանձումը և դրանից բխող հաշվետվողականությունը համարելով հարկաբյուջետային քաղաքականության իրականացման առանցքային սկզբունքներից մեկը:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում վարվող հարկային քաղաքականության արդյունավետությունը գնահատելիս ներկայումս որոշակի տեղեկատվական խնդիրներ են առաջանում: Դրանք հիմնականում ծագում են հարկազանձման տեղեկատվական հետադարձ կապի ապահովման շրջանակում: Հանքարդյունաբերության հարկազանձման հետադարձ կապը հարկերի հավաքագրման և վերաբաշխման առումով կարևորվում է, քանի որ հարկային քաղաքականությանը մասնակից շահառուները սոցիալ-տնտեսական տարբեր շարժառիթներ ունեն, ուստի և հասցեական տեղեկատվություն են ակնկալում հարկերի հավաքագրման ու օգտագործման գործառույթներից:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ՊԵԿ-ի պաշտոնական կայք, //www.taxservice.am
2. Խաչատրյան Ա., Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», 11-12 (195-196), 2016:
3. Հարությունյան Տ., Բիզնես միջավայրն ու հարկերի վճարման համեմատական բնութագիրը Հայաստանի Հանրապետությունում, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», 11-12 (161-162), 2013:
4. Մուրադյան Ա., Հարկային արդյունավետ քաղաքականության տեսամեթոդաբանական մոտեցումները, «Այլընտրանք» գիտական հանդես, №2, ապրիլ-հունիս, 2018:
5. Арутюнян Т., Направление налоговых реформ и проблемы оценки налоговой нагрузки в РА, «Известия аграрной науки», том 11, 3, 2013.
6. Грызлова Е.В., Налог на добычу полезных ископаемых. «Налоговый вестник», 3, 2007.
7. Балакина А.П., Частные и публичные интересы в налоговом праве: вопросы взаимодействия. «Налоги и налогообложение», № 2, 2005.
8. Кальнер В.Д., Экологический конфликт в обществе. «ЭКиП: Экология и промышленность России» № 6, 2012.
9. Кейсн Дж., Общая теория занятости, процента и денег. «Мир», 1936.
10. Кучеров И.И., Новый концептуальный подход к определению налога. «Финансовое право», № 1, 2008.
11. Игонина Л.Л., Конкурентоспособность национальной экономики: инновационные императивы и финансовые регуляторы. «Экономический анализ: теория и практика», № 7, 2014.
12. Игонина Л.Л., Воздействие фискальной и монетарной политики на развитие экономики и социальной сферы. «Финансы и кредит», № 15, 2014.
13. Muradyan S., Znotina D., Theoretical aspects of fiscal policy in the mining sector, journal of social sciences Latgale National Economy Research, No 1(11), november, 2019.

КАРЕН АСАТРЯН

Магистр делового администрирования

Московского государственного университета имени Ломоносова

Проблемы налоговой политики в условиях устойчивого развития горнодобывающей промышленности.–

Горнодобывающая промышленность отличается применяемой специальной фискальной политикой. Спектр налогов, применяемых в отрасли, шире и помимо традиционных налогов включает также взносы на природопользование, роялти и экологические налоги. Выполняя налоговые обязательства перед государством, горнодобывающая промышленность имеет ожидания от самого государства в части справедливого перераспределения налогов. Исследования показывают, что фискальная политика, применяемая в РА, не способствует устойчивому развитию горнодобывающих организаций, так как их ожидания в отношении государственной финансовой поддержки намного выше того, что происходит на самом деле. Налоговые органы обращаются за государственной финансовой поддержкой для внедрения новых технологий добычи полезных ископаемых, инвестиций в обращение с отходами современными методами, так как их внедрение затратно и требует внешней финансовой поддержки. С другой стороны, в эффективном перераспределении налогов нуждаются и сообщества, формирующиеся вокруг горнодобывающих организаций, поскольку именно они первыми ощущают пагубное влияние отрасли на охрану окружающей среды. Поэтому при разработке налоговой политики в горнодобывающей отрасли возникает необходимость решения не только проблем взимания налогов, но и справедливого перераспределения налогов.

В статье получают свои комментарии проблемы совершенствования фискальной политики, применяемой в сфере горнодобывающей промышленности, решение которых приведет к устойчивому развитию отрасли. В частности, предлагается установить механизм информационной обратной связи между внешними и внутренними бенефициарами майнинга, что даст возможность оценить степень реализации целей бенефициаров отрасли в контексте взаимодействия между текущей фискальной политикой и устойчивым развитием организаций.

Ключевые слова: *горнодобывающая промышленность, налоговая политика, налоговая нагрузка, налоговые поступления, перераспределение налогов*

JEL: H21, H30

DOI: 10.52174/29538114_2023.1-7

KAREN ASATRYAN*Master of Business Administration of
Moscow State Lomonosov University****Issues of Fiscal Policy in the Context of Sustainable Development of the Mining Industry.***

The mining industry is distinguished by the special fiscal policy applied. The range of taxes applied in the sector is wider, and in addition to traditional taxes, it also includes natural resource levies, royalties, and environmental taxes. By fulfilling tax obligations to the state, the mining industry has expectations from the state itself in terms of fair redistribution of taxes. Studies show that the fiscal policy applied in the RA does not contribute to the sustainable development of mining organizations, as their expectations for state financial support are much higher than what actually happens. Tax organizations seek state financial support for the implementation of new mining technologies, investments in waste management with modern methods, as their implementation is costly and requires external financial support. On the other hand, effective redistribution of taxes is also required by the communities formed around the mining organizations, as they are the ones, who first feel the harmful impact of the sector on environmental protection. Therefore, when developing a tax policy in the mining industry, there is a need to solve not only the problems of tax collection, but also the fair redistribution of taxes.

The paper focuses on the issues related to improving the fiscal policy applied in the field of mining industry, proposing potential solutions that can foster sustainable development of the sector. In particular, it is proposed to establish an information feedback mechanism between external and internal stakeholders of the mining industry. This mechanism will provide an opportunity to assess the degree of realization of the goals of the stakeholders of the sector in the context of the interaction between the ongoing fiscal policy and the sustainable development of organizations.

Keywords: *mining, tax policy, tax burden, tax collection, tax redistribution*

JEL: H21, H30

DOI: 10.52174/29538114_2023.1-7